

Մ Ա Գ Ա Ղ Ա Բ



ին ժամանակները, երբ դեռ
թուղթ պատրաստելու մասին
գաղափար չունեին, մարդիկ
թղթի փոխարեն օգտագործում

էին կաշի և պապիրուս: Կաշու վրա գրելու
սովորությունը շատ վաղուց հայտնի էր արե-
վելքում. հուն պատմաբանների վկայու-
թյամբ (Կտեղիաս) հինգերորդ դարում, Քրիս-
տոսից առաջ, կաշու վրա գրելու սովորու-
թյունը Փարսկաստանում վաղուցվանից
հայտնի էր: Գրելու համար օգտագործվող
կաշին կոչվում էր «գիֆտերայ»: այս անվան
տակ էլ նա անցնում է Հունաստան, ուր այդ
նպատակով օգտագործում էին զիսավորա-
պես այժի և ոչխարի մշակած մորթիները:

Հատուկ ձևով մշակված և գրելու համար
պատրաստված կաշիները հայերեն կոչվում
են մազաղար, իսկ օտար լեզուներով՝ պեր-
գամինա. այս անվանումն առաջ է եկել Փոքր
Սահայի Պերգամ քաղաքի անունից, որտեղ
գրելու համար օգտագործվող կաշիների մր-
շակման արհեստը հասել էր կատարելագործ-
ման ամենաբարձր աստիճանին:

Պլինիուսի վկայությամբ, երկրորդ դարում,
Քրիստոսից առաջ, Եգիպտոսի փարավլունները
ցանկանալով կրկնապատկել, իր հարստու-
թյամբ ու ճոխությամբ Պերգամ քաղաքի
գրադարանի հետ մրցող, Աղեքսանդրյան գր-
րադարանի հարստությունն ու փայլը, արգե-
լում են պապիրուսի արտահանությունը Ե-
գիպտոսից. իսկ պապիրուսն այն ժամանակ-
ները մեծ շափերով էր օգտագործվում գրելու
համար քան կաշին:

Պերգամիները սահպակած իրենց ուշադրու-
թյունը կենտրոնացնում են կաշու մշակման
վրա. Չուող նրանք այս ասպարեզում դպալի
հաշողություններ են ձեռք բերում, կատա-
րելագործելով մորթիների մշակումը. ստաց-
վում է նոր ու լավ որակի «գիֆտերայ». որը
գործածության մեջ է մտնում «գերմա», «սո-
մատիոն» անունների տակ. հետագայում դը-

րանք Պերգամ քաղաքի անունով էլ սկսեցին
կոչվել «պերգամեներ» կամ «պերգամենուս»:

Պապիրուսի հետ երկարատև մրցությունից
հետո վերջապես հաղթող է հանդիսանում
մազաղաթը, որովհետև մազաղաթն ունի այն
առավելությունը պապիրուսի նկատմամբ, որ
նախ կարելի է գրել նրա երկու երեսի վրա և
երկրորդ՝ շրի մեջ լուծվող թանաքով գրելու
դեպքում կարելի է գրածը չնշել, լվանալ և
փոխարենը որից բան գրել (պալիմպսիս-
տոններ, կրկնապիրներ):

Մազաղաթյա ձեռագիր թեռթերը միացնե-
լով կազմում էին «կողեքսներ», այսինքն ժո-
ղովածուներ կամ գրեր, բաղկացած առան-
ձին սկվարտիրնիոններից», այն է շորսթերթ-
յա տետրներից՝ երկտակ ծալված, որը կազ-
մում էր 16 էջ:

Կողեքսները սովորաբար ունենում էին
տախտակյա կաշեպատ կազմ, հաճախ զար-
դարված մետաղյա ճոխ զարդերով, և կոճկե-
լու կամ մերձգելու փականքներ. այդպես են օրինակ մեր ձեռագիր և տպագիր հին մատ-
յանները:

Միջնադարում, վանական մատենագրու-
թյան շրջանում, մազաղաթյա կողեքսները
հետզհետե անգործածելի են դարձնում ու
ասպարեզից զուրս մղում օդապիրուսի գրր-
երը — Volumina:

Քրիստոսի շորորդ դարից սկսած աս-
տուծապաշտության գրերը մազաղաթի
վրա գրելու սովորությունը համատարած բը-
նուցի է ընդունում, իսկ միջին դարերում ար-
դեն պապիրուսն այդ նպատակի համար
այլևս չըր գործածվում. դրա հետեւնքով էր
մազաղաթի մշակությունը ավելի ու ավելի է
կատարելագործվում, հասնելով իր զարգաց-
ման ամենաբարձր աստիճանին:

Հարավային Եվրոպայում մազաղաթ պատ-
րաստելու համար օգտագործում էին այժի ու
ոչխարի մորթիները, իսկ Ֆրանսիայում և
Գերմանիայում գլխավորապես հորթի մորթի-

ները — vitulinum. կրծատված — vittatum:

Սովորաբար պատրաստվում էր սպիտակ մագաղաթ, բայց առանձին դեպքերում, շքեղ գրությունների համար, պատրաստում էին առաջաման գույնով մագաղաթներ՝ դեղին, նամանակ գույնագույն, որոնց վրա գրում էին ուկով ու արծաթով: Մրանցից ավելի քիչ գործածական էր դեղին մագաղաթը — Codex crocatus. Crocus, որ նշանակում էր քրոպում, այսինքն բրդմագույն:

Մագաղաթ պատրաստելուց մորթիները ենթարկում էին մշակման մի շարք պրոցեսների, ինչպիս այժմ վարվում են աղով աղած կաշիների մշակման ժամանակ: Մորթիները սկզբում լվացվում էին և ապա մոխրաշրջում թույլ մոխրալուծույթի մեջ, որին ավելացնում էին կալիոն կամ պոտաշ, այնուհետև մորթին մաքրում էին նրա տակը կպած մսերից ու փառերից և ապա շրջանակների վրա քաշելուց ու ձգելուց հետո երեսի ու տակի կողմից խնամքով խստակում: Այս ձեռվ մաքրով ված կաշու վրա, նրա մսին կպած կողմից, կամին էին շաղ տալիս ու շեշաքարով հավասարեցնում: այս գործողությունը կրկնում էին մի քանի անգամ:

Դրանից հետո կաշին շորացնում էին օդով, հանում շրջանակից, քերում, հավասարացնելու համար, ու ողորկում շեշաքարով:

Հորթի և գառի մորթուց մագաղաթ պատրաստելու դեպքում ընտրում էին վեց շարաթական հորթերի ու գառների մորթիները: Լավ որակի մագաղաթը պետք է լիներ սպիտակ, բարակ, հավասար և խտացված:

Մանուշակագույն մագաղաթի վրա գրված

Հայերեն ձեռագրեր գեռ շեն հայտաբերված, բայց կան կարմրագույն մագաղաթի վրա գրվածներ: Հայերեն ձեռագրերը սովորաբար գրված են սպիտակ և երբեմն էլ դեղնագույն մագաղաթների վրա:

Հայերեն ձեռագրերը սովորաբար ունեն կաշեպատ տախտակյա կազմ. այդ կազմերի կաշեպատը զանազան դրոշմանկարներով զարդարելու սովորություն են ունեցել մեր նախնիքը: Կազմերի երեսները, անկյունները, կողերը զարդարվել են մետաղյա, հաճախ արծաթյա, զարդերով, խոշորագլուխ գամերով, ականակուու խաչերով, սրբերի պատկերներով: Մենք ունենք բազմաթիվ արծաթերես, թափապատ ձեռագրեր և փոսկրյա կողքով թանկարժեք մի ձեռագիր ավետարան:

Մագաղաթ պատրաստելու, կազմարարության, կազմերի համար հատուկ կաշի պատրաստելու, արծաթյա զարդեր անելու, մերձգելու փականքներ շինելու, խաչեր, արծաթապատներ, արծաթերեսներ ու սրբոց պատկերներ կերտելու արհեստները, ինչպիս երևում է, շատ տարածված են եղել Հայաստանում, էլ չենք խոսում գրչության, ծաղկելու ու ոսկելու արհեստների մասին, որ իր զարգացման կատարելության էր հասել, նամանավանդ Կիլիկյան շրջանում, երբ Ռուբինյան — Հեթումյան հարստության թագավորները մեկնաս են հանդիսացել՝ կազմելով թագավորական գրադարաններ — «Արկեղը տան» և պահելով գրչության, ծաղկելու, ոսկելու ու նկարության արվեստներին հմուտ մարդկանց մի ամբողջ անձնակազմ:

